ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2011, 64, № 3, 64-65

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ՍՈՒՐԵՆ ՍՈԿՐԱՏԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ
(ծննդյան 80-ամյակին)

2011թ. լրացավ կառույցների սեյսմակայունության տեսության բնագավառում ճանաչված բազմավաստակ գիտնական, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի դասախոս, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Սոկրատի Դարբինյանի 80-ամյակը:

Ս.Դարբինյանը ծնվել է 1931թ. մայիսի 10-ին, Տավուշի մարզի Տավուշ գյուղում:

1953թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը և աշխատանքի անցել ՀԽՍՀ ԳԱ Շինանյութերի և շինարարական կառուցվածքների գիտահետազոտական ինստիտուտում (ԱԻՍՄ):

1963-1993թթ. աշխատել է Հայաստանի ԳԱ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, բաժնի վարիչ, գիտության գծով փոխտնօրեն:

Շուրջ 30 տարի անընդմեջ Ս.Դարբինյանը գիտական աշխատանքին զուգահեռ դասավանդել է ՀՃՊՀ Գյումրիի մասնաճյուղում: 1977թ. Մոսկվայում հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել ֆիզ.–մաթ. գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Հեղինակ է ավելի քան 80 գիտական հոդվածների, համահեղինակ երկու մենագրությունների, զեկուցումներով հանդես է եկել միջազգային և համամիութենական մի շարք գիտաժողովներում: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են հինգ թեկնածուական ատենախոսություններ:

Մեծ է Ս.Դարբինյանի ավանդը Գյումրիի ՀՀ ԳԱԱ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի ստեղծման և զարգացման գործում: Նրա ղեկավարությամբ այնտեղ կազմակերպվել են տարբեր լաբորատորիաներ, այդ թվում նաև առաջին հաշվողական կենտրոնը:

Անվանի ակադեմիկոս Ա.Նազարովի հետ համատեղ Ս.Դարբինյանը մշակել է գործիքային հիմքով սեյսմիկ բալայնության որոշ-

ման սանդղակ։ Նա ակտիվ գիտական գործունեություն է ծավալել Սպիտակի երկրաշարժի հետևանքների ուսումնասիրման ուղղությամբ, որի համար պարգևատրվել է ՀՀ Կառավարության պատվոգրով։ Պարգևատրվել է նաև Հայաստանի Գերագույն խորհրդի և ԳԱԱ մի շարք պատվոգրերով, Ռենտգենի անվան մեդալով։ Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը Ս.Դարբինյանը "Ինժեներային սեյսմաբանություն" հանդեսի գլխավոր խմբագիրն էր։

Սկսած 1993թ. պրոֆեսոր Ս.Դարբինյանն աշխատում է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում, տարբեր տարիների զբաղեցնելով շինարարական մեխանիկայի, նյութերի դիմադրության, տեսական մեխանիկայի ամբիոնների վարիչի պաշտոնները։ Այժմ էլ նա շարունակում է գիտամանկավարժական գործունեությունը նշված համալսարանում՝ փոխանցելով իր հարուստ գիտելիքները և փորձը երիտասարդ սերնդին։

Ջերմորեն շնորհավորում ենք պրոֆեսոր Ս.Դարբինյանին ծննդյան 80–ամյակի կապակցությամբ, ցանկանալով նրան քաջառողջություն և երկար տարիների բեղմնավոր գիտական գործունեություն։

ՀՀ ԳԱԱ "Գիտություններ Երկրի մասին"
տեղեկագրի խմբագրություն